1893 ՅՈՒԼԻՍԻ 23 (4 Օգոստ.) ՈՒՐԲԱԹ

№ 84—ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 84

1893 ՅՈՒԼԻՍԻ 23 (4 Օգոստ.) ՈՒՐԲԱԹ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Նոմերին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն. օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՊԷՏՔ Է ՎՃԱՐԵԼ 6 Ռ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երևանեան Հրապարակի և Միջի-փողոցի անկիւն քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Հրովարտակ։
Ս. Էջմիածնի միաբանների խցերի շինութիւնը։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նամակ Խմբագրին։ Ագամեան, Ադամեան։ Լեհացոց վերաբերեալ կարգադրութիւն։ Նուէրներ Վեհափառ Կաթողիկոսի համար։ Խոլերան կրկին Բագւում։ Երկրաշարժ Թիֆլիզում։ Դիլիջանից։ Անդրկասպեան երկաթուղի։ Կովկասի «կուրօրտների» բարեկարգութեան խնդիրը։ «Նով. Վրեմիա» լրագրի մի թղթակցի զառցոյթը։ Հայ երգիչների նուագահանդէսը։ Երջունհի օր. Պապայեան։ Աթօն ռուս. վանքի վանականների ագահութիւնը։ Դարձեալ մեր թատրոնները։
ՖԷԼԻԵՏՕՆ.—Յաղթող Բարդէկը։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Երեք ագռաւ։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿ

Էջմիածնի Ծայրագոյն Պատրիարք Մկրտիչ Կաթողիկոսին Ամենայն Հայոց։

Ի նշան Մեր առ հայոց եկեղեցին ունեցած հոգածութեան և յարտայայտումն Մեր յատուկ առ ձեզ առանձին բարեհաճութեան, ամենաողորմածաբար Մենք ձեզ դասեցինք բարեպաշտ Մեծ. Իշխան ս. Ալէքսանդր Նևսկու Մեր Կայսերական ասպետութեան կարգը, որի նշանները սրա հետ ուղարկում ենք, մնալով բարեհաճ դէպի ձեզ Մեր Կայսերական ողորմածութեամբ։

Իսկականի վրայ է Նորին Կայսերական Մեծութեան յատուկ ձեռքով գրուած է

«ԱԼԷՔՍԱՆԴՐ»

Ի Պետերհօֆ,
6 յունիսի 1893 թ.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԽՑԵՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Մօտիկ օրերում բաղդ ունենալով Ս. Էջմիածնում լինել, մասնագիտութեանս հետաքրքրութեանը բաւականութիւն տալու համար գնացի տեսնելու միաբանների համար կառուցուող շինութիւնը։ Այդ շինութեան համար ընտրուած տեղը գտնվում է արևելեան կողմում ճեմարանի և վանքի մէջ՝ տպարանի կողքին, իսկ այդտեղն ընտրուած է այն նպատակով, որ դեռ կանգուն հին շինութիւնների վերցնելով, ընդլայնացուի և ընդարձակուի վանքի գաւիթը։

Նախ և առաջ թռուցիկ հայեացքով նկարագրենք ամբողջ շինութեան մակարդակը՝ թէ որքան արեգօք յարմար դասաւորութիւն ունին նորա սենեակները և առողջապահական տեսակէտից որքան նպաստաւոր են այդտեղ բնակուող մարդկանց առողջութեան համար. ապա մի քանի խօսք կ'ասենք տնտեսավարական այն միջոցների մասին, որոնք ներկայումս շինութեան կառուցման ժամանակ ձեռք են առնուած. իսկ ամենից վերջը, որպէս մասնագէտ այդ գործում, աւելորդ չենք համարիլ տալ մեր եզրակացութիւնը, մատնացոյց լինելով այն մասնաժողովի աններելի և անհոգ անփութութեանց վրայ, որ ներկայումս ղեկավարում է այդ շինութեան կառուցման գործը։

Շինութեան մակարդակը ուղղանկիւն քառանկեան ձև ունի, որի երկայնութիւնն է մօտ 30 սաժ. իսկ լայնութիւնը մօտ 6 սաժէն։ Յետևի կողմը (ճեմարանի կողմից), 30 սաժէնի ամբողջ երկայնութիւնը սաստկապէս կոտրատվում է դուրս ու ներս ընկած աստիճանաձև և խորանանման գոգաւորութիւններով, այնպէս որ բացի 6 սաժ. լայնութիւնից, ամբողջ շինութիւնը դուրս է ընկնում դէպի առաջ 4 արշ. տարածութեամբ և 5 արշ. լայնութեամբ և այս կրկնվում է իրարից 5 արշին հեռաւորութեամբ այնքան անգամ՝ ինչքան խուց որ ունի ամբողջ շինութիւնը. այնպէս որ գաւթին նայող կողմը պատկերացնում է մի ատամնաւոր քանոն։ Այս դուրս ընկած մասերի մէջ որոշած է շինել փայտեայ սանդուղքներ ամեն մի խուցի համար առանձին։ իսկ սանդուղքների առաջի բաց տարածութեան տակ մտադիր են շինել արտաքնոցներ հէնց նոյն իսկ գաւթի կողմի մուտքի մօտ՝ սանդուղքի վանդակապատի մէջ, իսկ և իսկ դռներին կից և այն՝ ամեն մի վարդապետի (միաբանի) համար առանձին, բոլորովին կղզիացրած. ուրիշ խօսքով, որքան միաբան՝ այնքան արտաքնոց, որոնց մաքրելու եղանակը լինելու է արտահանական՝ շարժական արկղների միջոցով։ Շինութեան իւրաքանչիւր մի զոյգ դուրս ընկած մասերի միջանցքում շինվում են փայտեայ պատշգամբներ իսկ և իսկ շարժական արկղների վրայ։

Շինութիւնը երկյարկանի է և երկու յարկերն էլ միատեսակ դասաւորութիւն ունին, որոնք յարմարեցրած են բնակութեան համար։ Խցերն իւր մօտ դասաւորուած են հետևեալ ձևով ու կարգով.—նախ խուցը, նորա կողքին շարքով միջանցքը (նախադուռն), յետոյ դարձեալ մի ուրիշ խուց և դարձեալ միջանցք և այլն այս շարունակվում է անընդհատ այնքան՝ որքան խցերի թիւն է։ Այս վերջինները դասաւորած են երկ-կարգ ձևով.—առաջի (ճակատի) և յետևի երկայնութեան գծերով։ Երկու յարկի մէջտեղի յատակները փայտեայ են և խուլ կոչուած տեսակից (черный)։ Մասնաժողովը որոշել է տանիքը ծածկել հողով։ Սենեակների բարձրութիւնը մօտ 5 արշին է, բայց դռների շէմերը ցածր են յատակի իսկական հորիզոնական մակերևութից, այնպէս որ շինութեան ցոկոլը համարեա թաղուած է գետնի մէջ։ Բայց մասնաժողովը ենթադրում և մտադիր է ամբողջ գաւթի մակերևոյթի հողը դուրս տալով իջեցնել գէթ ցոկոլի բարձրութեան չափ ծաւալով, որպէս զի վանքի դռան շէմը կարողանայ և հնար լինի հաւասարացնել կառուցուող շինութեան շէմքին։ Շինութեան գլխաւոր ճակատը նայում է վանքին, իսկ միւս երկրորդական հասարակ ճակատները նայում են.—մէկը տպարանին, իսկ միւսը դէպի հիւսիս։ Այս շինութեան պատերը շարվում են հեշտ տաշուող և վուլկանական ծագումն ունեցող տեղական տաշած քարից։

Գլխաւոր ճակատը, եթէ նայելու լինինք նորա վրայի զարդարանքներին՝ կազմուած է այլ և այլ ստիլներով, ուր գլխովին բացակայում է հայկական ճարտարապետութեան ոճն ու յատկանիշը, որ շատ և շատ ցանկալի կը լինէր տեսնել եթէ ոչ ամբողջութեամբ՝ գէթ հայկական ճարտարապետութեան յատկանիշը կրող թեթև զարդարանքներ և այդ նամանաւանդ այնպիսի նշանաւոր վանքի մօտ՝ որպիսին Ս. Էջմիածինն է, որ կազմում է մի ահագին շտեմարան չափազանց գեղեցիկ ու ճաշակաւոր զարդարանքների և դրուագաքանդակների կերտուած իսկ և իսկ բուն հայկական ճաշակին և ստիլին համաձայն։

Առհասարակ առողջապահիկ--ճարտարապետական տեսութիւնները նըպատակայարմար և բարւոքեն գտնում որ և է շինութեան կառուցման ժամանակ երբէք շինութեան մասերի մէջ ընդ առաջ ցցուած մասեր ու բաժիններ չանել, իսկ եթէ այդ անշուշտ կարևոր ճանաչուելու լինի՝ այդպիսի դէպքում գոնէ սահմանափակել այդ ցանկութիւնը որքան կարելի է փոքրաթիւ դուրս ընկած մասերով, որպէս զի ամբողջ շինութիւնը կարող լինէր կանոնաւորապէս և միակերպ հողմահարուել քամիով, լուսաւորուել և տաքանալ արեգակով։ Եւ մինչև անգամ այդ ձևի շինութեան մէջ թէ ներս գնացող և թէ դուրս եկող անկիւնները դիտմամբ կլորցնում են, որպէս զի օդի ազատ շարժողութիւնը դուրս ցցուած սուր անկիւնների շնորհիւ արգելքի չհանդիպէր և չխանգարուէր, հակառակ դէպքում օդը անկիւնների մէջ չափազանց զգալի կերպով և անշարժօրէն կը թանձրանայ, որ կը ծառայէ իբրև աղբիւր գարշահոտութեան և վարակման տարածուելու համար. իսկ սրան ամենայն յաջողութեամբ կը նպաստէ արտաքնոցների բազմութիւնը և այդ գլխաւորապէս ամրան անտանելի շոգին, որից առարկանները այն աստիճան տաքանում են, որ երբեմն մինչև անգամ ջերմութիւնը հասնում է շատ բարձր աստիճանների. աւելցրէք սրա վրայ և այն, որ շարժական արկղների մէջ անմաքրութիւնները կըսկսեն լուծուել և արտաթորել գարշահոտ գազեր շատ վատ ազդեցութիւն թողնելով մարդուս առողջութեան վրայ, որ ի հարկէ, բոլորովին ցանկալի չէ։ Մինչև անգամ դուրս ընկած մասերի մէջ օդի ուղղաձիգ շարժողութեան առաջն էլ է առնուած պատշգամբների շինութեամբ, որոնք յատկապէս շինուած են նրա համար, որ բնակիչներին միջոց տան առաւօտներն ու երեկոները պատշգամբ դուրս գալով՝ թարմ օդ ծծել և զուարճանալ բնութեան տուած պարգևներով։

Արտաքոյ շինութեան՝ օդի այդ օրինակ անյաջող շարժողութիւնը կը ներգործէ անշուշտ սենեակների մէջի օդի մաքրութեան վրայ, որտեղ առանց այն էլ օդը պիտի լինի շատ փակուած և ծանր, ըստ որում արտաքնոցները շինվում են գլխովին առանց որևիցէ արհեստական օդափոխութեան միջոցների և մինչև անգամ առանց հասարակ օդափոխական խողովակների. հետևաբար նըրանք ևս կամայ թէ ակամայ պէտք է անդադար գարշահոտութիւն տարածեն և զօրեղացնեն իրանց մահաւէտ գործողութիւնը սանդուղքի վանդակի միջով ներս մտնելով սենեակները, որ շատ ցաւալի ազդեցութիւն կ'ունենայ ներսի առանց այն էլ փակուած կեանք վարող բնակիչների առողջութեան վրայ։ Այստեղից պարզ հետևում է թէ՝ որովհետև օդափոխութեան միջոցներից զրկուած է արտաքնոցը, որ հէնց նոյն ինքն շտեմարանն է կազմում վարակիչ բաղադրութեանց, նոյն պայմանների մէջ պէտք է գտնուին նաև բնակուելու սենեակները, զրկուած լինելով այդ ամենակարևոր յարմարութիւնից, իսկ այդ՝ կազմում է իսկապէս շինութեան ամենաէական արժանիքն ու նախապատուութիւնը։

ՖԷԼԻԵՏՕՆ

ՅԱՂԹՈՂ ԲԱՐԴԷԿԸ *)

(Հէնրիկ Սէնկևիչ)

Գ

Առաւօտ է։ Տժգոյն լուսով լուսաւորուած են գունատ և անքնութիւնից տանջուած երեսները. նստարանների վրայ խառն ի խուռն քնած են զինուորները՝ ոմանք գլուխները կրծքներին խոնարհեցրած, այլք մէջքի վրայ դէպի յետ ընկած։ Արշալոյսը զարթնում է և ողողում է ամբողջ աշխարհը վարդագոյն լուսով։ Թարմ և զուարթ է եղանակը։ Զինուորներն արթնանում են, արևի պայծառ ճառագայթները բաց են անում նրանց աչքերը ծածկող մէգի և մառախուղի վարագոյրը, որով ծածկուած էր նրանց անծանօթ երկիրը։ Ո՜հ, ո՞ւր է այժմ Պագդնեօգովան, վերին և ներքին Կրիվդան, ո՞ւր է Միգիրովան. այս արդէն օտարութիւն է, այստեղ ամենայն ինչ այլ կերպ է։ Չորս կողմում ձգվում են բլրակներ՝ ծածկուած կաղնիներով. հովիտներում երևում են տընակներ, կարմիր խեցիով ծածկուած կտուրներով, որոնց ճերմակ պատերի վրայ սև գերաններ են երևում, գիւղական տնակներ նման կալուածատէրերի բնակարանների, որոնց շուրջը պատում են այգիք։ Տեղ տեղ աչքի են ընկնում սրածայր գմբէթներով եկեղեցիք. գործարանի բարձր ծխնելոյզներ, որոնք արձակում են ծուխի ամպեր։ Միայն այստեղ կարծես թէ նեղուածք է. չկան ընդարձակ արտեր։ Բայց նորա փոխանակ մրջիւնների պէս վխտում են մարդիկ։ Շոգեկառքի առջևից յաջորդում են միմեանց անընդհատ գիւղերը և քաղաքները։ Գնացքը կանգ չէ առնում, թողնում է բոլոր փոքրիկ կայարանները։ Երևի մի բան է պատահել, որովհետև ամենուրեք խռնուած է ամբոխը։ Արևը կամաց կամաց դուրս է գալիս լեռների յետևից, և Մացէկները մէկը միւսի յետևից սկսում են առաւօտեան աղօթքի կանգնել։

Վերջապէս գնացքը կանգ է առնում մեր կայարանի առաջ։ Այստեղ խռնուած է ժողովրդի ահագին բազմութիւն. պատերազմի դաշտից արդէն իսկ համբաւներ են ստացուել։ Յաղթութի՜ւն, յաղթութի՜ւն... հեռագիրները մի քանի ժամ առաջ են հասել արդէն։ Ամենքը պարտութիւն էին սպասում, բայց ուրախաւուր համբաւ հասաւ, ուստի և ընդհանուր ուրախութեանը չափ չկայ. մարդիկ անկողիններից վեր էին թռել և հազիւ հագնուած՝ վազել էին դէպի կայարանը։ Մի քանի կտուրների վրայ դրօշներ են տնկուած, գրեթէ բոլոր պատուհաններից թաշկինակներ են ծածանում։ Շոգեկառքերի մէջ բաժանում են գարեջուր, թիւթիւն և գլանակ. ոգևորութիւնն աննկարագրելի է. դէմքերը փայլում են։ «Wacht am Rein» որոտում է փոթորկի նման. ոմանք լալիս են, այլք գրկում են միմեանց։ Unser Fritz (Մեր Ֆրիցը) թշնամիներին ջարդ ու փշուր է արել։ Աւար են առնուած թնդանօթներ, դրօշներ։ Ազնիւ ոգևորութեամբ վառուած ամբոխը տալիս է ամենայն ինչ, որ իւր մօտ ունի, զինուորներին։ Արիութիւնը զարթնում է զինուորների սրտերում և նոքա սկսում են երգել. կառախումբը դղրդվում է ուժեղ ձայներից, իսկ ամբոխը զարմանքով ականջ է դնում անհասկանալի երգի խօսքերին։ Պագդնեօգովցիք երգում են. «Բարթօլօմէյ, Բարթօլօմէյ, յոյսդ մի կորցնիր». «Die Polen! Die Polen!» (Լեհացի՜ք, Լեհացի՜ք) — ի բացադրութիւն աղաղակում է ամբոխը և խռնվում կառքերի առաջ հիանալով զինուորների տեսքով և մի և նոյն ժամանակ զուարճանալով այն առակների պատմութիւնով, որոնց մէջ յիշվում են լեհական գնդերի ահռելի քաջագործութիւնները։

Բարդէկի այտերը փքուեցան, որ՝ նրա դեղնագոյն բեխերի, պլշած աչքերի և ահագին ոսկրոտ կազմուածքի հետ միասին, նրան մի սարսափելի տեսք էին տալիս։ Նրա վրայ նայում են ինչպէս մի որ և է գազանի վրայ։ Ահա թէ ինչպիսի պաշտպաններ ունին գերմանացիք։ Սա արդէն ֆրանսիացիների հախիցը կը գայ... Բարդէկը ինքնագոհ ժպտում է և նա գոհ է, որ ֆրանսիացիներին ջարդել են։ Գոնէ նոքա չեն գալ Պագդնեօգովա, Մագդալին ճանապարհից չեն հանիլ և իւր հողը ձեռքից չեն առնիլ։ Բարդէկը ժպտում է, բայց որովհետև նրա այտը ջարդուած է, նա խոժոռւում է ցաւից և արդարև սոսկալի կերպարանք է ստանում։ Բայց նա չնայելով դորան ուտում է հոմերական հերոսի ախորժակով երշիկի պատառները և գարեջրի բաժակները աներևութանում են նրա կոկորդի մէջ ինչպէս անդընդում։ Նրան տալիս են գլանակներ, մանր փող — նա վերցնում է բոլորը։

— Ինչ բարի ժողովուրդ են այս գերմանացիք — և անմիջապէս յարակում է.—բայց տեսնո՞ւմ ես, ֆրանսիացիներին ծեծել են։

Բայց սկեպտիկ Վօյդէկը նորա ուրախութեան վրայ սառեր է ձգում։ Վօյդէկը նախազգուշակում է Կասանդրայի պէս.

— Ֆրանսիացիք առաջ թոյլ են տալիս իրանց ծեծելու, որ շփոթեցնեն, իսկ յետոյ երբ իրանք սկսում են, այն ժամանակ կոտրտանքը երկինք է թռչում։

Վօյդէկը չի էլ իմանում, որ նորա կարծիքը Եւրոպայի մեծ մասի կարծիքն է և աւելի քիչ այն բանի մասին տեղեկութիւն ունի, որ ամբողջ Եւրոպան իւր հետ միասին սխալվում է։

Գնացքը յառաջ է ընթանում։ Բոլոր տները ինչքան մարդուս աչքը կտրում է՝ դրօշներով զարդարուած են։ Մի քանի կայարաններում գնացքն ստիպուած է երկար կանգ առնելու, որովհետև շարժումն ահագին է։ Գերմանիայի ամենայն ծայրերից շտապում են զօրքերը իրանց յաղթական եղբայրակիցների օգնութեան։ Բոլոր գնացքները զարդարուած են կանաչ պսակներով. հեծելազնդի զինուորները նիզակների ծայրերին կրում են ծաղկէ փնջեր, որ նրանց նուիրել են ճանապարհին։ Հեծեալների մեծ մասը Լեհացիք են։ Երբեմնակի կառքերից լսվում են՝ «Ինչպէ՞ս էք եղբայրներ»։ Յառա՜ջ բարի։ Իսկ երբեմն մօտով անցնող գնացքներից հնչում է մի ծանօթ երգ և այն ժամանակ Բարդէկը իւր ընկերներով ձայնակցում են և յաջորդ տունն են երգում։

Ինչքան որ Պագդնեօգովից դուրս գալու ժամանակ ամենքը տխուր էին, այնքան էլ այժմ բոլորեքեանք զուարթ են ու աշխոյժ։ Բայց Ֆրանսիայից հասնող առաջին գնացքը, որ բերում էր առաջին վիրաւորուածներին, փոխում է նրանց լաւ տրամադրութիւնը։ Այդ գնացքը կանգ է առնում Դէյցում և այդտեղ երկար է մնում, որպէս զի թոյլ տայ առաջ անցնելու այն գնացքներին, որոնք շտապում են դէպի ճակատամարտը. բայց որպէսզի ամենքն անցնեն Կէօլնի կամրջով երկար ժամանակ էր հարկաւոր։ Բարդէկը իւր ընկերներով գնում է վիրաւորեալներին տեսնելու։ Սորանք պառկած են ծածկուած և բաց կառքերի մէջ, ահա սրանց կարելի է լաւ դիտել, սրանց տեսնելուն պէս Բարդէկի հերոսական ոգին յետ է փախչում դէպի կրունկները։

— Տես, Վօյդէկ, — կանչում է զարհուրած Բարդէկը, — տես ինչքան մարդ են փչացրել Ֆրանսիացիք։

Եւ յիրաւի տեսնելու բան շատ կայ։ Տժգոյն դէմքեր ցաւից կամ վառօդի ծուխից սևացած ներկուած են արիւնով։ Ընդհանուր ուրախութեան աղաղակին նրանք հառաչելով են պատասխանում, Մի քանիսը անիծում են պատերազմը, Ֆրանսիացիներին և գերմանացիներին։ Պապակուած, սևացած շրթունքները ամեն վայրկեան ջուր են խնդրում, բոլորի աչքերը բորբոքուած են և գրեթէ կատաղած։ Այստեղ և այնտեղ վիրաւորուածների մէջ երևում են մեռնողների անշարժ դէմքերը, որոնք երբեմն հանգիստ են, աչքերի շուրջը պատած սև շրջանակով, երբեմն ծամածռուած ցնցումով, հուպ եկած ատամներով։ Բարդէկը առաջին անգամ է տեսնում պատերազմի արիւնոտ պտուղները։ Նորա գլխում նորից ամեն ինչ խառնաշփոթվում է։ Նա կանգնած է ինչպէս կայծակնահար եղած՝ բերանը լայն բաց արած, նորան ամեն կողմից հրում են, ոստիկանի մէկը նրա վզակոթին տալիս է։ Բարդէկը աչքերով փնտռում է Վօյ-

---

*) Տե՛ս «Արձագանք» № 82.

Յիշատակուած շինութեան կառուցումը առաջ է ընթանում տնտեսական եղանակով. դրա համար սահմանուած է մի մասնաժողով, որ դնում է շինութեան ամբողջ նիւթեղէնքը, վարձում է գործաւորներին ու վարպետներին և հսկում է նոյնպէս շինութեան վրայ. սրան պէտք է աւելացնել, որ տողերիս գրած ժամանակ (մարտի 15-ին) մասնաժողովի մէջ բոլորովին չէր մասնակցում և ոչ մի ճարտարապետ կամ տեխնիկ. այս իսկ պատճառով հարկ ենք համարում նկարագրել և բացատրել դրա գործունէութեան կերպն ու եղանակը: Սկսենք նախ քարի գործից: Առանց հասարակական աճրդի և առանց դրա մասին լրագրաց միջոցաւ յայտարարութիւնների տպագրութեան յիշեալ մասնաժողովը քարի շինուածքների գործը յանձնել է մի հասարակ վարպետի արտաքին տաշած քարով պատի իւրաքանչիւր քառակուսի սաժէնը 30 ռուբլիով առանց նիւթեղէնի, իսկ ներսի կտրուածք-պատերը երկու կողմից և միջից անունով քարէ շարուածքով 4 ռուբլի. մնացած շէնքերի մասին խօսելն աւելորդ եմ համարում, որովհետև նրանք նոյնպէս ենթարկուել են նոյն բաղդին ու վիճակին, ինչ վիճակի ու բաղդի որ արժանացել են քարէ շինուածքները: Ինչ վերաբերում է շինութեան ճաշակաւորութեանը, գեղեցկութեանը ու հաստատութեան ճարտարապետական տեսակէտից, կարելի է ասել, թէ առաջի և գլխաւոր՝ վանքի հանդիպահայեաց ճակատը հարուստ է և ճաշակաւոր, իսկ մնացեալ երեք ճակատները բոլորովին հասարակ շէնք ունին, բայց երկու տեսակ թէ առաջին և թէ միւս երեք ճակատների շէնքի իւրաքանչիւր քառակուսի շէնքի վճարը միաչափ է գնահատուած ու տրուած, չնայելով որ նրանց շէնքերի մէջ մեծ զանազանութիւն կայ: Այժմ իւրաքանչիւր մի քառակուսի սաժէնի 30 ռ. արժողութեան համաձայն համեմատենք մի վարպետի մի օրուան մէջ կատարած գործը նրա օրական վարձատրութեան և մի քառ. սաժէնի արժողութեան հետ: Մի քարտաշը ստանում է օրական 2 ռուբլի 50 կոպէկ և նրանցից ամեն մէկը գործնական և փորձնական տեսակէտից դատելով մի օրում կը տաշէ գրուագաւոր քանդակներ կամ այլ զարդարանքներ կրող քար $1/2$ քառ. արշին, իսկ $1\,1/2$ քառ. արշին բոլորովին հարթ և հաւասար մակերևոյթ ունեցող քար գլխաւոր ճակատի պատի շարուածքի համար: Ուրեմն մի քարտաշը մի օրում կը տաշէ 2 քառ. արշին. իսկ այդ քարից մի քառակուսի սաժէն տաշելու համար կը պահանջուին 2 վարպետ 2 ռ. 50 կոպ. վարձով ամեն մէկը և մի օգնական, իսկ մնացեալ ճակատների պատերի տաշուածքի համար մի քարտաշը կարող է տաշել օրը $1/2$ քառ. սաժէն, իսկ այդ քարերով մի քառ. սաժ. տաշուածքի համար կը պահանջուի երկու վարպետ և նոցա հետ մի բանուորի ոյժ. Ուրեմն վարպետների ոյժը հաշուի առնելով՝ գլխաւոր ճակատի մի քառ. սաժէն 1 ռ. էլ պատի միւս երեսի քարի տաշուածքին հաշուելով կը նստի 18 ռ. 25 կոպ. իսկ մնացեալ երեք ճակատների մի քառ. սաժէնը կը նստի 11 ռուբլի: Եթէ երկու տեսակ շարուածքի իւրաքանչիւր քառ. սաժէնին վարպետին կամ կապալառուին եթէ օգուտ ձգելու լինինք 2-ական ռուբլի, այն ժամանակ նոքա կ'արժենան առաջին տեսակը 20 ռ. 25 կոպ. և 13 ռուբլի, միջին թւով $16\,5/8$ ռուբլի: Արդ, համեմատելով 30 ռուբլի ներկայ գնահատութիւնը վերոյիշեալ $16\,5/8$ ռ. գնահատութեան հետ, որի մէջ մտնում են երկու դէպքում ևս թէ լուսամուտների և թէ դռների բաց տարածութիւնները՝ ես գալիս հանգչում եմ ինձ համար բոլորովին անբացատրելի և մութն ու մռայլ եզրակացութեան: Մնացեալ մասին բոլորովին աւելորդ եմ համարում երկար ու բարակ բացատրութեանց մէջ մտնել: Այնուհետև մասնաժողովը ենթադրում է և որոշել է շինութեան չորս կողմի հողը մօտաւորապէս մի դեսեատին տուրս տալ — ցածրացնել գետինը, որպէս զի ցօկոլը դուրս գայ գետնից և շինութեան դռների շէմքը հնար լինի հաւասարացնել վանքի դռան շէմքի հետ, բայց հողի տեղափոխութիւնը կը հանդիպի դժուարութեանց, որովհետև տարածութիւնը շատ հեռու է և անհարթ, մանաւանդ որ փոխադրելու միջոցների պակասութիւն է զգացվում Ս. Էջմիածնում:

Մ[illegible] Յովսէփ [illegible]:

(Կը շարունակուի)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Յովսէփ Իզմիրեանցի գրական մրցանակաբաշխութեան սոյն տարուայ մասնակցողների շարքում՝ Թիֆլիզի հայ լրագրները, Պոլսի մամուլից առած, յիշատակել էին և իմ անունը: Բայց մրցանակի հանդիսի նկարագրութեան մէջ ոչ մի բառով չէր յիշուած իմ մասնակցութիւնը:

Այս հակասութեան բացադրութիւնը թէպէտ Պոլսի մամուլի պարտքն էր, որ հակասութեան տեղի էր տուել, բայց եթէ նա գուցէ չէ արել այդ, վասնորոյ այդ պարտաւորութիւնը անմիջապէս ընկնում է իմ վրայ:

Արդարև ես ևս ունեցայ վստահութիւն մասնակցելու այս տարի մրցանակաբաշխութեանը և այս նպատակով «Փորձի» և «Արարատի» տետրակներից և մի ժողոված իմ «Ճանապարհորդական նկատողութիւնքը», ընդամենը 550 տպագրական երես, առանձին նամակով անցեալ տարի նոյեմբերին ուղարկեցի Սրբազան Պատրիարք հօրը: Դեկտեմբերին հաստատ աղբիւրից տեղեկացայ, որ նամակս Պոլսում ստացուել է, իսկ գիրքը՝ ոչ:

Նոյն աղբիւրից տեղեկացայ որ Պոլսի փոստային, մաքսային ու գրաքննական հաստատութիւններում գոյութիւն ունին մի առանձին կարգ և կանոններ, այնպէս որ արտասահմանից եկած գիրքը ոչ [illegible] այլ իբրև ապրանք փաթեթով, փոստային վարչութիւնը յանձնում է մաքսատանը և սա գրաքննութեան ատենին, ուր գիրքը մաշւում է յաւիտենական կորստեան և այլ ևս անհնար է նրան յետ ստանալ:

Տեղեկութիւն չունենալով այս հանգամանքներից, որից հրապարակով զգուշացնելը իմ կարծիքով Գործադիր Մնայուն Յանձնաժողովի պարտաւորութիւնն էր, ես գիրքս ուղարկել էի կապոցի մէջ կարած, և այս պատճառը իմ հրատարակում, որ ուրիշները ևս չընկնեն իմ կրած փորձանքի մէջ:

Մի կողմից ինձ համար շատ դժուար էր «Փորձի» և «Արարատի» զանազան տարիների տետրակները ձեռք բերել ու նորանցից հանած թերթերը երկրորդ գիրք նորից ուղարկել Պոլիս, միւս կողմից՝ կասկածելով, թէ մի գուցէ փաթեթը կորել է Ռուսաստանի սահմաններում, դիմեցի փոստային հաստատութիւններին, որոնք հետախուզութիւնից յետոյ պաշտօնապէս հաղորդեցին թէ ուղարկուած քաթեթը յաջողութեամբ դուրս է գնացել Ռուսաստանի սահմաններից:

Այնուհետև ոչ մի հնար չունենալով որոնելու գիրքը Տաճկաստանի սահմաններում կամ գրաքննական ատենից ազատելու, ես ստիպուեցայ դիմել Ռուսիոյ դեսպանութեան Պոլսում, որից մինչև օրս տեղեկութիւն չունիմ:

Ուրեմն թող տեսնէ ընթերցողը որ ուղարկուած գիրքը չէ յանձնուել Մնայուն Յանձնաժողովի կարգադրութեան և մամուլի հաղորդած լուրը իմ մասնակցութեան մասին առնուած է իմ նամակից առ Սրբազան Պատրիարքը:

[illegible]:

20 յուլիսի
Սալիան:

* * *

Վեհափառ Կաթողիկոսին մատուցանելու համար գաւառներում պէս-պէս նուէրներ են պատրաստում:

Այսպէս բացի Մերվի հասարակութեան գործից Նոր-Նախիջևանցիները՝ ինչպէս հաղորդում են մեզ, չորս ձիերով հանդերձ մի շքեղ կառք են պատրաստել:

Այս դէպքում միմիայն Թիֆլիզ քաղաքն է, որ հանգիստ սրտով նայել է և ոչ միայն մի պատրաստութիւն չէ տեսնում, այլ չէ էլ մտածում:

* * *

ԱԴԱՄԵԱ՞Ն, ԱԴԱՄԵԱ՞Ն

Ո՞վ կարող է թատրոն մտնել, թատրոնական տաղանդներով զմայլել և Ադամեանին չյիշել:

Ո՞վ չի մտաբերում այն փառահեղ ցոյցերը, այն աշխարհ թնդեցնող «կեցցէ»-ները, որ կատարվում էին հայոց մեծ դերասանի առաջև:

Կար ժամանակ, որ հայերն էլ պարծանքով և սրտի խորին բերկրութեամբ թատրոն էին շտապում և ոգևորուած բուռն հրճուանքով տոմսակների համար իրար գլուխ էին ջարդում:

Ինչո՞ւ:

Ադամեանը համլէտ էր ներկայացնում:

Եւ երբ սրտատրոփ սպասող ամբոխի առաջ թախիծը դէմքին առած, տխրամած, սրտակտոր հայեացքով բեմի վրայ երևան է գալիս հայոց համլէտը, Օ՜, ինչ թնդիւններ էին որոտում թատրոնի կամարները, ինչ ոսկէ գործեր, ծաղկէ փնջեր ու պսակներ էին, որ հեղեղում էին նրա առաջ:

Բայց մեռաւ նա և այդ բոլորն այլևս չկայ:

Սակայն այսօր նոյն ծաղկէ փնջերն ու պսակները, նոյն թնդիւններն ու դղրդիւնները, նոյն հրճուալից ցոյցերը, որոնք տեղում են օրիորդ Պապայեանի առաջ. այդ մեզ յիշեցնել է տալիս Ադամեանը և բեմի այն քաղցր անցեալը, որ անցաւ մեծ դերասանի օրով:

Անմահ դերասանի լոկ անունն է մնացել մեր մէջ և կենդանի միայն ուրուականը, որին մենք չենք տեսնում, սակայն լսում ենք անշուշտ նրա գանգատը, որ մրմնջում է. «Ապերախտներ, կեղծաւորներ, ո՞ւր էք յիշում իմ անունը, երբ իմ յարգանքը լոկ անմիտ խօսքերով էք արտայայտում»:

Եւ այդ գանգատը՝ ուրուականը լցում է նրա անշուք գերեզմանից:

Բայց ի՞նչ է այդ գանգատը:

Գերեզմանն անշուք, ծածկուած է մի շատ հասարակ քարով, չունի մեծ դերասանի անուան համապատասխան փայլը. գրական վաստակները խաւար անկիւններին յանձնած. վաստակներ, որոնք արտադրուած են անմահ դերասանի սրտի խորքերից. սիրտ, որ ամեն մի հայի համար կարօտալի և փափագելի է եղել:

Այս է նրա ուրուականի գանգատը և այս ենք մենք յիշեցնում:

Արդ՝ եթէ մտաբերում ենք, եթէ յիշում ենք նրան, եթէ տակաւին նուիրական է նրա անունը և պանծալի նրա յիշատակը, ինչո՞ւ ուրեմն այսքան ապերախտ լինել և նրա մեծ անուան հետ չյաւերժացնել նրա գեղարուեստի բոլոր պտուղները, ինչո՞ւ շիրիմը չզարդարել իւր վսեմ անուան համաձայն մի գեղեցիկ արձանով, ինչո՞ւ նրա գողտրիկ վիպակները մթութիւնից չհանել և չհրատարակել առանձին գրքոյկներով և այդպիսով չհանգստանալ և չամաչել մեր խղճի առաջ և շարունակ չհառաչել. Ադամեա՜ն, Ադամեա՜ն:

Եւ այս բոլորը կատարելու համար մեծ ջանք չէ հարկաւոր և ոչ մեծ զոհաբերութիւն: Այս դէպքում միայն հարկաւոր է պարտաճանաչութիւն, որ թողում ենք, ոչ միայն հայ հասարակութեան, այլ և իւր ընկերների վրայ:

Արշակ Թ[illegible]:

* * *

ԼԵՀԱՑՈՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ

Պաշտօնապէս հրատարակուած է Վիլնայի, Կովնոյի և Գրոդնոյի ընդհանուր նահանգապետի հետևեալ շրջաբերականը, որ ուղղած է տեղական նահանգապետին, որ վերաբերում է լեհական լեզուի գործածութեան՝ Ռուսաստանի հիւսիս-արևմտեան նահանգներում.

«Իմ նախորդների շրջաբերականներից յայտնի է ձեր գերազանցութեան, որ վերջին լեհական ապստամբութեան պատճառով, որ տարածուեցաւ նաև արևմտեան նահանգներում, կառավարութիւնը հարկաւոր դատեց առանձին իրաւունքներ շնորհել յիշեալ նահանգների գլխաւոր իշխանութեան, այն է ընդհանուր-նահանգապետին՝ ուշի ուշով հսկելու, որպէսզի լեհական պրոպագանդը չըյայտնուի այն երկրում և այս պատճառով արտօնութիւն տրուեցաւ՝ համապատասխան պատժական միջոցներ գործ դնել:

«Ի շարս քաղաքական զանցառութեանց ընդունուեցաւ և լեհական լեզուի գործածութիւնը՝ դիւանատներում, պաշտօնական յարաբերութեանց մէջ պաշտօնական անձանց հետ, հասարակական ժողովներում, հասարակական տեղերում, դպրոցներում, թատրոնական ներկայացումներում, սրճանոցներում, քաղցրաւենեաց խանութներում և մագազիններում:

«Չնայելով այս կարգադրութեան օրինականութեանը, որի խանգարումն դրամական տուգանքի է ենթարկւում մեղաւորին, վարչական միջոցներով, վերջին տարիներում սկսուել է կրկնուել յիշեալ կարգադրութեան խանգարումները, իսկ մեղաւորներից մի քանիսը դիմեցին մինչև անգամ բողոքներով, կամայականօրէն բացատրելով, թէ այդ տեսակ արարքները պատժի չեն ենթարկվում:

«Հարկաւոր եմ համարում օրինակի համար մատնանիշ անել Վիլնայի բժիշկ Դիմշայի դէպքը, որ իրան թոյլ տուեց ոչ միայն համարձակապէս (դէմօնստրատիվ) անուշադիր թողնել երկրի բարձր իշխանութեան կարգադրութիւնը, որ կայացած է լեհական լեզուի գործ չածելու վերաբերութեամբ՝ հասարակական տեղերում, այլ և, երբ նա ենթարկուեց դրամական տուգանքի, դիմեց կառավարիչ սենատին գանգատուելով, թէ իշխանութիւնն իրաւունք չունէր նորան դրամական տուգանքի ենթարկելու:

դէկին՝ գտնում է նրան և կանչում.

—Վօյդէկ, Տէր Աստուած, մ՛խ:

—Քո գլխին էլ նոյնը պիտի գայ:

—Յիսուս, Մարիամ, ինչպէս են մարդիկ միմեանց սպանում: Այ եթէ գիւղացին գիւղացուն ծեծի, ոստիկանն իսկոյն նրան դատարան կը տանի և կը պատժեն:

—Դէհ, իսկ այժմ նա է ամենից լաւը, որ ամենից շատ մարդ կը փչացնի: Իսկ դու, յիմարի գլուխ, կարծում էիր թէ առանց գնդակի պէտք է արձակես հրացանը, ինչպէս զինավարժութիւնների ժամանակ, կամ նշանի պիտի խփես և ոչ թէ մարդո՞ւ:

Յիրաւի տեսականութեան և գործնականի մէջ զանազանութիւն կայ: Մեր Բարդէկը զինուոր էր, եղել էր զինավարժութիւնների մէջ, հրացան էր արձակել, գիտէր որ պատերազմը մարդ սպանելու համար է. իսկ այժմ երբ տեսաւ վիրաւորուածների արիւնը, նա այնպէս վատ զգաց իրան, որ ոտքի վրայ կանգնել չէր կարողանում:

Նրա մէջ նորից զարթնեց յարգանք դէպի Ֆրանսիացիք և այդ յարգանքը նուազեց միայն այն ժամանակ, երբ գնացքը հասաւ Կէօլն: Կենդրոնական կայարանում Բարդէկը տեսաւ առաջին գերիներին: Նրանք շրջապատուած էին զինուորներով և ժողովրդի մեծ բազմութիւնով, որ նայում էր նրանց հպարտութիւնով, բայց դեռ ևս առանց ատելութեան: Բարդէկը մղուեց ամբոխի մէջ. թևերով նրանց հրեց մի կողմը, կառքի ներսը նայեց և զարմացաւ:

Ֆրանսիական հետևակների մի խումբ փոքրահասակ, կեղտոտ, ծածկուած վիրակապներով լցնում էր կառքը ինչպէ՜ս ձկները՝ տակառը: Նրանցից շատերը ձեռք էին մեկնում ստանալու այն խեղճ ողորմութիւնը, որ բաշխում էր նրանց ամբոխը, ինչքան էլ այդ խանգարում էր պահապանների խումբը: Բարդէկը Ֆրանսիացիների մասին ամենևին այդ գաղափարը չէ կազմել: Նորա ոգին կրունկներից կրկին թռաւ դէպի կուրծքը: Նա չորս կողմը նայեց, թէ արդեօք Վօյդէկն այնտեղ էր: Վօյդէկը նրա կողքին կանգնած էր:

—Դու ինձ ինչ էիր ասում,— հարցնում է Բարդէկը — անպէտք մարդիկ: Մէկին որ տաս, չորսը գետին կը փռուեն:

—Կարծես թէ մանրացել են,— պատասխանեց նոյնպէս հիասթափուած Վօյդէկը:

—Ինչպէս են խօսում նրանք:

—Յամենայն դէպս ոչ լեհերէն:

Այդ մասին ապահովուած Բարդէկը կառախմբի երկարութեամբ առաջ գնաց:

—Սարսափելի կեղտոտներ. . . ասաց նա հետևակ զօրքը աչքի անցնելուց յետոյ:

Յաջորդ կառքի մէջ նստած էին Զուավները: Դրանք ստիպեցին Բարդէկին աւելի խորը մտածելու: Որովհետև նրանք փակ կառքերի մէջ էին, ուստի չէր կարելի ստուգել թէ նրանք սովորական մարդիկ են, թէ երեք անգամ աւելի մեծ: Պատուհաններից երևում էին միայն երկար մօրուսները սպառնալի և փայլուն աչքերն ու զինուորական լուրջ դէմքերը հին զինուորների:

Բարդէկի ոգին կրկին ուղղուեց դէպի կրունկները:

—Սրանք արդէն երկիւղալի են,— շշնջաց նա կարծես թէ վախենալով, որ իւր ասածը կը լսեն:

— Դու դեռ նրանց չես տեսել, որոնք գերի չեն ընկել,— ասաց Վօյդէկը:

—Թէ Աստուածդ սիրես:

—Այ կը տեսնես:

Զուավներին լաւ դիտելուց յետոյ նրանք առաջ գնացին: Յաջորդ կառքին մօտենալով Բարդէկը խայթուածի նման յետ թռաւ:

—Պահպանի՛ր, Վօյդէկ, ազատի՛ր:

Բաց պատուհանից երևում էր տիւրկօ կոչուած զինուորի մռայլ, գրեթէ սև երեսը փայլուն սպիտակ աչքերով: Երևի նա վիրաւորուած էր, որովհետև նրա երեսը ծամածռուած էր ցաւից:

—Դէհ ինչ կ'ասես,—հարցնում է Վօյդէկը:

— Դա սատանայ է և ոչ զինուոր: Տէր, ողորմիր ինձ մեղաւորիս:

—Մի նայիր թէ ինչպիսի մեծ ակռաներ ունի նա:

—Էհ, նրա էլ. իսկի չեմ էլ նայիլ երեսին:

Բարդէկը լռեց, բայց մի վայրկեանից կրկին ասաց.

—Ի՞նչ ես կարծում, եթէ որ նրա վրայ խաչակնքենք:

—Կռապաշտների դէմ մեր հաւատը չէ զօրում:

Նստելու նշան տուին: Գնացքը շարժուեց: Երբ մթնեց, Բարդէկին երևում էին միայն տիւրկոսի սև դէմքն ու նրա սարսափելի աչքերը: Այն զգացմունքը, որ այժմ տակն ու վրայ էր անում Պագդնեօղովի զինուորի սիրտը, քիչ յոյսեր էր տալիս նրա ապագայ քաջագործութիւնների մասին:

Գ.

Գրաւելոտի գլխաւոր ճակատամարտին մասնակցելով Բարդէկը համոզուեց, որ կռուի մէջ շատ բան կայ, որին կարելի է նայել և ոչինչ չանել: Առաջ հրամայուած էր նրան և իւր գնդին հրացանը ձեռներին կանգնել մի բլրակի ստորոտումը, որ ծածկուած էր այգիներով:

Հեռուում թնդանօթները որոտում էին, մօտիկից անցնում էին հեծեալների գնդերն այնպիսի տրոփիւնով, որից դողում էր երկիրը. երբեմն ծածանւում էին դրօշները, երբեմն փայլատակում [illegible] սրերը, բլրի գլխով երկնքի երեսից սուլելով թռչում էին նռնագնդերը (գրանատ) սպիտակ ամպերի կտորների նման, որից յետոյ ծուխը բռնում էր ամբողջ հորիզոնը: Թւում էր թէ պատերազմը փոթորիկի նման կողքով անցնում է, բայց այդ երկար չտևեց: Քիչ ժամանակից յետոյ Բարդէկի գնդի շուրջն սկսուեց մի տեսակ շարժումն: Նրանց շուրջը շարժեցին ուրիշ գնդեր, իսկ նրանց մէջ տեղերը կանգնեցրին թնդանօթներ, որ անմիջապէս իրանց բերաններն ուղղեցին դէպի բլրակը:

Ամբողջ հովիտը լցուեց զօրքով: Հրամանները հնչում էին ամեն կողմից. աջակից սպաները արշաւելով հասնում էին ամեն կողմից, իսկ զինուորները շշնջում էին միմեանց ականջին. «էլ մեր ճաշը կ'եփեն». կամ մէկ մեկուց հարցնում էին անհանգիստ. «պիտի սկսուի, ինչ է», «անպատճառ»: Մօտենում է մի ինչ որ անսպասելիքան, առեղծուած, կարելի է մահ... Բլուրը ծածկող ծխի մէջ եռում է մի բան և բըղխում է ճերմակ աղբիւրի պէս: Աւելի և աւելի լսելի է դառնում թընդանօթների գոռիւնը և հրացանների ճայթիւնը. հեռուից հասնում է մի անորոշ ձայն. այդ արդէն գնդակների պայթման սկսուելու նշանն է: Յանկարծ նոր շարած թնդանօթները որոտալ որ սկսեցին, ամբողջ երկիրն ու օդը դղրդաց, Բարդէկի գնդի գլխին վժժաց մի բան ահռելի կերպով: Նա նայում է. մի բան թռչում է լուսաւոր [illegible] նման, կարծես ամպ լինի, իսկ այդ ամպի մէջ վժժում է մի բան, ծիծաղում է, կրճտում է և ռռնում: Գիւղացիք աղաղակում են. «[illegible]». և թռչում է այդ պատերազմի թըռչունը, թռչում է ինչպէս հողմ, մօտենում է, վայր է ընկնում, պայթում է: Լսվում է խլացուցիչ ճայթիւն, դղրդիւն, կարծես ամբողջ աշխարհը կործանվում է:

Թնդանօթների մօտ կանգնած զինուորների շարքի մէջ շփոթութիւն է ընկնում, լսվում է աղաղակ և յետոյ հնչում է հրամանը «միացէ՛ք»: Բարդէկը առաջին շարքումն է, հրացանը ուսին, գլուխը երկինք ամբարձած. պինդ օձիքը վեր է բռնում նրա ծնօտը. ատամներով չէ կարելի կրճտացնել, եթէ կամենաս էլ: Կանգնել, սպասել.— իսկ այդ ժամանակ թռչում է երկրորդ գրանատը, երրորդը, չորրորդը, տասներորդը... փոթորիկը ցրվում է բլուրը պատող ծուխը: Ֆրանսիացիք պրուսական թնդանօթաձիգ գունդը քշել են այնտեղից, արդէն կանգնեցրել են իրանց գունդը և հովիտը ողողում են կրակով: Վայրկեան առ վայրկեան այգու որթի թփերի միջից դուրս են թռչում սպիտակ ծխի շերտեր: Հետևակագունդը թնդանօթների պաշտպանութեան ներքոյ աւելի և աւելի իջնում է վայր հրացանաձգութիւն սկսելու համար. ահա նրանք բլրի մէջտեղումն են. Ֆրանսիացոց կարելի է պարզ տեսնել,— հողմը վանել է ծուխը: Բայց այս ինչ է, խաշխաշ է բուսել յանկարծ այգու մէջ: Ոչ, այդ հետևակագնդի գլխարկներն են: Նրանք նախ աներևութանում են բարձր

«Այս գանգատի առիթով այժմ ես ստացայ կառավարիչ սենատի հրամանը, յունիսի 3-ից, համարաւ 6,141, որից երևում է, որ սենատը, ի նկատի առնելով, որ ընդհանուր նահանգապետի կարգադրութիւնը, որի դէմ գանգատուել է բժիշկ Պիմշայի հաւատարմատար, երդուեալ հաւատարմատար Սերգէյ Անդրէեվսկին, կայացել է տակաւին չջնջուած, ուրեմն մինչև այժմ ոյժ ունեցող կանոնների հիման վրայ, որ հրատարակել են հիւսիս-արևմտեան նահանգների նախկին ընդհանուր-նահանգապետները, և ուրեմն յիշեալ կարգադրութիւնը չէ դուրս գալիս երկրի գլխաւոր կառավարչին տուած իրաւունքների սահմաններից,—հարկ չգտնեց քննել յիշեալ գանգատը ըստ էութեան, վասն որոյ որոշեց. այդ գանգատը թողնել առանց քննութեան։

«Որպէսզի անախորժ հետևանքներից զերծ մնան այն անձինք, որոնք թիւրիմացութեան պատճառով մեղաւոր կարող են հանդիսանալ այս տեսակ զանցառութեանց մէջ, քանի որ կարևոր է և այժմ խստութեամբ և առանց տատանման կատարել իմ նախորդների պարտաւորեցուցիչ կարգադրութիւնները, որոնք սահմանուած են այն նպատակով, որ վերջ դնուի լեհական պրոպագանդային լիտվա-ռուսական երկրում, խնդրում եմ ձեր գերազանցութեան, հրապարակ հանել այս իմ շրջաբերական առաջարկութիւնը, տպագրելով նորան տեղական նահանգական լրագրում»։

Շրջաբերականը ստորագրել է՝ ընդհանուր-նահանգապետ, սենատոր, գեներալ-լէյտենանտ Օրժէվսկին։

⁂

Բագուի նահանգի բժշկական վարչութիւնը պաշտօնապէս յայտնում է, որ յուլիսի 12-ից մինչև 17-ը Բագու քաղաքում և շրջակայքում խօլերայի նշաններով հիւանդանալու հինգ դէպք է եղել։ Այս առիթով Կովկասի բժշկական վարչութեան գլխաւոր տնօրէն իսկ. պետ. խորհրդ. Գլավացկին ամսոյս 20-ին ուղևորուեցաւ Բագու տեղնուտեղը հիւանդութիւնը հետազօտելու և հարկ եղած միջոցները ձեռնարկելու։

⁂

Երեքշաբթի, յուլիսի 20-ին, երեկոյեան 10 ժ. 50 րոպ. Թիֆլիզում երկրաշարժ եղաւ, որ երկու վարկեան տևեց։ Երկրաշարժն աւելի զգալի էր քաղաքիս արևմտեան կողմը ս. Դաւիթ կոչուած մասում։

⁂

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են.—Դիլիջանի պատուաւոր գիւղացիներ և ամառանոցականներ, թւով 50 հոգի, փող են ժողովել Վէհափառ Հայրապետին հացկերոյթ տալու իւր ուղևորութեան միջոցին։ Այս մասին դիմել են յայտարարութեամբ Ս. Էջմիածին, որ այնտեղից կարգադրութիւն լինի ժողովրդի ցանկութեան լրումն տալու։

⁂

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, որ Անդրկասպեան երկաթուղին, որ գտնվում է զինուորական նախարարութեան տնօրինութեան ներքոյ, այժմ անցնում է ճանապարհների հաղորդակցութեան նախարարութեանը, որի տնօրինութեան ներքոյ գտնվում են կայսրութեան բոլոր երկաթուղիները բացի մի երկու զինուորական գծերից, արևմտեան Ռուսաստանում, Աւստրային և Գերմանիային սահմանակից նահանգներում։

⁂

«Կովկասեան «կուրորտների», այն է, Պեատիգորսկ, Կիսլովօդսկ և Ժելեզնովօդսկ, բարեկարգութեան խնդիրը վերջնական լուծում ստանայ։ Մտադրութիւն կայ նոր շինութիւններ կառուցանել լողարանների համար։ Այս նպատակով հրաւիրուած է ճարտարապետութեան ակադեմիկոս կոմս Սիւզոր, որ մեծ մասնակցութիւն ունէր նախագծերի կազմութեան մէջ և որ պիտի հսկէ նոյն իսկ շինութեան վրայ։

⁂

«Նովոյէ Վրեմիա» լրագրի Վիլնա քաղաքի թղթակիցը սաստիկ զայրանում է, որ Իլինի նշանաւոր գործարանի քարտէզների վրայ արևմտեան Ռուսաստանի մի քանի քաղաքները եւ գիւղերը կրում են լեհական վերջաւորութեամբ անուններ փոխանակ ռուսականի։ Այսպէս օրինակ՝ Մօսարխ՝ փոխանակ Մօսարի, Միխայլովշիզնա՝ փոխանակ Միխայլօվօ և այլն։ «Ռուսկ. Ժիզն» լրագիրը, ծաղրելով այս տեսակ հայրենասիրութիւնը, ասում է, թէ ինչու թղթակիցը չէ բողոքում և թաթարական անունների դէմ, որ կրում են Սարատով, Ղազան, Աստրախան քաղաքները, կամ վրացական անունների դէմ, որ կրում են Թիֆլիզ, Քութայիս կամ Բօրժօմը։ Պէտք է հետևողաբար վարուել,—ասում է լրագիրը։

⁂

Չորեքշաբթի օրը արքունական թատրոնում կայացաւ օր. Պապայեանի և պ. պ. Ճահլամեանի ու Ամիրջանեանի նուագահանդէսը։ Թատրոնը լիքն էր, ասեղ ձգելու տեղ չկար։ Օր. Պապայեանը նոյնքան հրաշալի էր, պ. Ճահլամեանը նոյնքան ապշեցնող, պ. Ամիրջանեանը նոյնքան յաջող ապագայ խոստացող, որքան և նախընթաց անգամները։ Անշուշտ այն մեծարանաց մէջ, որ հասարակութիւնը արտայայտում էր հայ երգիչներին, փոքր դեր չէր խաղում և ազգասիրական զգացմունքը, բայց և այնպէս պ. պ. երգիչները չպէտք է այդ զգացմունքից օգտուէին աժանագին յաջողութիւն ձեռք բերելու համար։ Էլ «Ծիծեռնակ» ասես, էլ «Ձայն տուր, ով ծովակ», ասես, էլ «Օրօրոցի երգ» ասես, էլ «Երազ» ասես, էլ «Ինձ համար չէ» ասես, էլ չեմ իմանում ինչ ասես, բացի գուցէ «Մեզանից շատ առաջից», որ չերգեցին մեր պարոնները, մեծապէս զուարճացնելով գալէրէի և երկու լիտերական օթեակների հանդիսատեսներին և ազգասիրական բուռն ծափահարութիւնների արժանանալով։ Օր. Պապայեանը գեղեցիկ փունջեր և մի քանի թանկագին ընծայ ստացաւ։

⁂

Մեր տաղանդաւոր երգչուհի օր. Ն. Պապայեանը ուղևորվում է այսօր Երասթուման, ուր մի նուագահանդէս տալուց յետոյ կը վերադառնայ Թիֆլիզ և անմիջապէս կ'ուղևորուի Լիպեցկ և իւր մայրենի քաղաք Աստրախան։ Ձմեռը յարգելի օրիորդը երգելու է Իտալիայում։

⁂

Աթօնում (եւրոպական Ռուսաստան, Մակէդօնիա), ինչպէս յայտնի է, բազմաթիւ վանքեր և անապատներ կան, որոնք կազմում են օրթօդօքս եկեղեցու սեփականութիւն և որոնց վանահայրերը մեծ մասամբ ռուս ազգութեան են պատկանում։ Վանահայրերը, օգտուելով ռուսաց ազգի միջին և ստորին դասակարգերի ջերմեռանդութիւնից և մասամբ տգիտութիւնից, մեծապէս շահագործում են նոցա քրիստոնէական զգացմունքները։ Ռուսաց սինօդը քանիցս պաշտօնապէս զգուշացրել է ռուս ժողովուրդին յիշեալ խաբեբայ վանականների ագահութեան թակարդների մէջ ընկնելուց։ Այժմ կառավարութիւնը «պաշտօնական յայտարարութեամբ» նորից զգուշացնում է ռուս բարեգործներին չխաբուել սուրբ Աթօնի վանքերի հրաւէրներով, որովհետև չի կարելի վստահ լինել, որ նուէրները իրանց նպատակին են հասնում։ Հետաքրքիր է հետևեալ սակագինը (տաքսա), որ Աթօնի սուրբ հայրերը նշանակում են իրանց տպագրած նամակների մէջ, որ բազմութեամբ ուղարկում են ռուս հաւատացեալներին։ Ամեն օր յաւիտեանս պատարագի ժամանակ յիշելու համար—30 ռուբլի, շաբաթը մի անգամ յիշելու համար 15 ռուբլի, ամիսը մի անգամ—7 ռուբլի և այլն։ Մի քանի հրաւէրների մէջ այդ գումարները կրկնապատկուած են։ Հրաւէրների հետ ուղարկվում են պատրաստի ծրարներ՝ պատասխանների և ընծայաբերութեանց համար, որոնց վրայ տպագրուած են ռուսերէն և ֆրանսերէն լեզուներով հանգանակողների հասցէները։

⁂

ԴԱՐՁԵԱԼ ՄԵՐ ԹԱՏՐՈՆՆԵՐԸ

Die gerade Linie ist für den Asiaten nicht gemacht! (Ուղիղ գիծը ասիացու համար գոյութիւն չունի), ասաց իմ ծանօթ մի եկուոր գերմանացի, երբ աչքը ձգեց Թիֆլիզի քաղաքային տան կորնիզին (corniche), որի գծերը, փոխանակ ուղիղ երթալու ալիքաձև, կոր ընթացք են բռնել և լաւ օրինակ կարող են լինել գծագրութեան ուսուցչի համար, երբ սա աշակերտներին բացատրում է, թէ ուր պէտք է գործ դնել կոր գիծը ճարտարապետութեան մէջ։

Գերմանացի բարեկամիս աֆօրիզմը ձևափոխելով, ես էլ կ'ասէի, թէ կարգ ու կանոն պահպանելը մեր Թիֆլիզի թատրոնի համար չէ սահմանուած։ Կարգ չպահպանելու ախտը ոչ միայն արևելցու ժառանգութիւնն է, այլ և վարակում է բոլոր՝ հիւսիսից, հարաւից, արևմուտքից և աշխարհիս ամեն ծայրերից մեզ մօտ հիւր եկող, մեզ ջուրը խմող օտարականներին։ Դիմենք գործին։

Թիֆլիզի զբօսասէր, ժամանակի մահացու թշնամի, անգործ բաղդաւորների համար երեկոյեան հանգստութեան (?) օթևաններից մինն էլ տեղական լրագրների, մանաւանդ մի «Թերթիկի» գոված ու փառաբանած «Պուշկինեան» թատրոնն է։

Այդ «Թատրոնի» գոյութեան ամբողջ ընթացքում չար դևը երկու թէ երեք անգամ դամարս է մտել գնալ, տեսնել ու ճաշակել։ Աւա՜ղ, ամեն անգամ, հազիւ առաջին գործողութիւնը վերջացած չվերջացած, հիասթափուած ու փոշմանած, փախել եմ։

Բայց, Տէր Աստուած, տեղական «Թերթիկը» այնքան լեզու է թափում... քար պիտի լինիս, որ դիմանաս։

Սրտիս քար սեղմելով վեր կացայ գնացի։ Ներկայացնում էին «Գասկոնցի», կամ «Սատանայի որջը»։ Դէհ, էլ ինչ պատմեմ, դարձեալ գլխիս պտոյտը բռնեց.. բայց, նալաթ չար սատանին, ասացի, համբերենք մինչև վերջը։

Աստուած իմ, այն ինչ ինկվիզիցիական տանջանք էր, որ կրեց Զուպպէի այդ գեղեցիկ մուզիկան։ Փոխանակ երգերի, մանաւանդ խմբական երգերի (хоръ) ոռնոցներ ու սուլոցներ էին լսվում։ Օրկեստրն ու երգողները իրարու ոչ տեսնում, ոչ լսում և ոչ ճանաչում էին. յուշարարն էլ սօլիստներից յետ չէր մնում, բաւական մշակել է իւր ձայնը։

Այս բոլոր սիրուն բաների վրայ աւելացրէք և հետևեալը. Նստած եմ առաջին կարգ աթոռի վրայ (մէկ ռուբլի 35 կոպ. փող եմ վճարել). յանկարծ երկրորդ գործողութեան կիսին, կողքիս ազատ աթոռի վրայ գալիս ու աղավարի բազմում է մի ինչ որ կասկածելի արտաքինի տէր individuum. մազերը սև, գզգզուած, խղոտ ու կեղտոտ. կարմիր չթի շապիկը կեղտոտ, երեսը սև ու լուացումի անծանօթ, վրան մի սև (մեղանչում եմ, գոյնը չէր որոշվում), կեղտի մէջ կորած սերթուկ, վրայից էլ տարածվում է մի անտանելի բուրումն և ի լրումն ամենայնի հեւալու պատճառով անդադար էլ ֆստացնում է։ Դէհ, եկէք ու դիմացէք։ Անմիջապէս տեղս փոխեցի։

Երբ, գործողութիւնը վերջանալով դռնապանին հարցնում եմ այդ «անտիկայի» մասին, նա ինձ ամենայն հանգստութեամբ պատասխանում է.

«Да, это здѣшній буфетчикъ».

Աչքներս լոյս։ Ուրեմն վաղը եթէ երթամ, շատ կարելի է, որ բաղդ ունենամ կողքիս ճարպաթաթախ ու մրակոլոլ խոհարարին տեսնելու։ Merci!

Ց. Լ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՔ ԱԳՌԱՒ

(Ալֆօնս Դոդէի)

Երեկոյ է։ Ցերեկը ճակատամարտ կար։ Երկու թշնամի բանակների հարուածները շփոթել, խռովել են բոլոր շրջակայ բնութիւնը. Թնդանօթներից դուրս շնչած բոցակէզ ծուխը՝ որպէս թանձրացած ու խանձուած մի ամպ, տարածվում է տակաւին պատերազմի դաշտի վրայ։ Օդը այնպէս է խեղդուած կործանքներից, որ կարծես թէ փոթորկից նոր դադարած մի ծով լինի։ Դեռ ևս զգալի է ցերեկուայ սոսկալի հարուածների ցնցումը։ Եւ ձիւնով ծածկուած գետինը, որ անհանգիստ է եղած իւր ձմերային քնի մէջ, փորուել, պեղուել, անիւների անցած - թողած հետքերից, ոտնակոխ է արած յուսահատ քայլերից և խրամատուել, խորացել է մարդկանց ու երիվարների անկումից։

Ո՛հ, աղետաբեր հերկումն Պատերազմը մեռելներ է սերմ ցանել ձիւնոտ ակօսներում։ Մոխրագոյն բաճկոնակ հագած վիրաւորեալ զինուորները հոգևարք դրութեան մէջ են։ Ակօսների և փոսերի միջից երևում են դէպի վեր պարզած բազուկներ և ուղղաձիգ մեկնած ոտներ, որ ձգուելիս իրանց առաջ են մղել հողը։

Մի երիտասարդ զինուոր գունատ կերպարանքով և բաց երեսով, պառկած է կապարի պէս ճնշող այդ երկնքի տակ։ Նորա ձեռքերը սևացել են վառօդից և գնդակները ծակծկել նորա վերնազգեստը։ Ճակատամարտի խիստ կրակի մէջ նա շատ քաջաբար էր կռվում, և երբ իւր զինակիցները տեսան, թէ ընկաւ՝ կարծեցին որ արդէն մեռած է։ Բայց նա կենդանի է, և դեռ իրան մնացած նըւազ ոյժի բոլոր զօրութեամբ՝ օգնութիւն է կանչում։ Սակայն անկեալների հեծեծանքն ու հոնչիւնն է միայն, որ պատասխան են տալիս նորան։

Նա ընդարմացած է ցրտից և ցաւից։ Թնդանօթների փայլատակումը, պայթող գնդակոծիչների (mitrailles) շառաչիւնը և կռուողների յամառ ու արիւնահեղ մաքառման շարժումները յոգնեցրել, ուժասպառ են արել նորան։ Սառը հողը, որի վրայ նա պառկած է այժմ, իւր մեծ և խաղաղ հանդարտութեան մէջ մտնելով՝ ասես հրապուրում, գրաւում է նորան դէպի իւր ներսը։ Եւ երիտասարդ վիրաւորեալ զինուորը բոլորովին պատրաստ է արդէն քնի կամ մահուան տալու իրան։

Բայց աչալուրջ անեղր հորիզոնը, որ ամբողջապէս երևում է նորա կիսաբաց աչքերին՝ հիւսիսային կողմից երեք սև կէտեր է ցոյց տալիս նորան։ Եւ որչափ մօտենում են այն սև կէտերը՝ նոյնչափ էլ ստուարանում, մեծանում են։—Դոքա թռչուններ են, լուռ, տխուր թռչուններ, որոնք շտապում են այս կողմը...

Ահա շուտով թռան, եկան այդ թռչունները, այդ երեք չարագուշակ ագռաւները, և երիտասարդ զինուորի գլխի ճիշտ վերև՝ թևերը ձիգ պարզած, ասես կախուած-կեցած, մնում են սպիտակագոյն օդի մէջ. և՝ գիշակերներին յատուկ անվրդով խաղաղութեամբ, ակն դրած նայում, դիտում են... Ճակատամարտի դեռ ևս խառն ու երերուող մթնոլորտում ձիգ կեցած այդ մեծ թևերի գրեթէ մեղմ սաւառնումն յիշեցնում է կռուի այն երեք դրօշակը, որոնց ծայրերին մի մի սև ագռաւ կար տնկուած՝ բաց թևերով։

—Արդեօք դէպի ինձ են գալիս այն թռչունները, հարցնում է ինքն իրանից վիրաւորուածը։ Եւ տեսնելով որ երեք սև ագռաւները՝ բարձրից յանկարծակի վայր թռչելով, թառեցան իրանից մի քանի քայլ հեռու եղած փոքրիկ բլրակի վրայ՝ իսկոյն մի սարսուռ զգաց նա՝ դողալով իւր բոլոր խեղճ մարմնով։

Հաւատամ որ գեղեցիկ թռչուններ են այդ ագռաւները՝ գէր, պլպլան, լաւ կերակրուած։ Ոչ մի փետուր չէ պակաս դոցա թևերին։—Ամեն տեղ՝ պատերազմի դաշտում ներկայ են լինում այդ թռչունները. և իսկապէս պատերազմն միայն, որ կերակրում է դոցա։ Սակայն դոցա ներկայութիւնը շատ հեռուից, շատ բարձրից է լինում, այնպէս որ ոչ մի գնդակ չի հասնի իրանց։ Եւ ճակատամարտի դաշտի վրայ այն ժամանակն են միայն երևում է, երբ զօրքը արդէն գետնին է ընկած, և վիրաւորեալն ու սպանուածը՝ աղէտալից մի հալասարու-

---

Թփերի մէջ. ոչ ոք չէ երևում, միայն տեղ-տեղ ծածանում են եռագոյն դրօշները։ Սկսվում է հրացանաձգութիւնը – արագ, տենդային, անհաւասար բռնկող այստեղ և այնտեղ. իսկ այդ կրակներից վերև [illegible] շարունակում ոռնալ և օդի մէջ խաչաձև միմեանց կտրել։ Բլրի վրայ երբեմն հնչում են աղաղակներ, որոնց ներքևից պատասխանում է գերմանական «հուռռան»։

Թնդանօթները հովտից որոտում են անընդհատ կրակելով. զօրագունդը կանգնած է անվրդով և հանգիստ. վերջապէս կրակն սկսում է շրջապատել նրան, գնդակները վզզում են հեռուում ճանճերի բզզոցի նման, կամ մօտիկից թռչում են զարհուրելի կերպով սուլելով։ Հետզհետէ նրանց թիւը բազմանում է. ահա նրանք սուլում են գլխների, քթերի, աչքերի և ուսերի մօտով. նրանք հազարաւոր են, միլլիոնաւոր։ Դեռ պէտք է զարմանալ, թէ ինչպէս ոտքի վրայ մարդիկ կան կանգնած... Յանկարծ Բարդէկը ետևը լսում է հառաչ. «Ով Յիսուս» և ապա. «միացէք». կրկին. «Ո՜վ Յիսուս». և նորից, «միացէք»։ Հառաչները ձուլուելով կազմում են մի անընդհատ խմբերգ, հրամանը աւելի յաճախ է լսվում, շարքերը նեղանում են, իսկ հրանօթների ձայնը քանի գնում աւելի սարսափելի է դառնում։ Սպանուածներին դուրս են տանում ոտներից քաշելով։ Կատարեալ վերջին դատաստանի օրն է։

—Վախենո՞ւմ ես, հարցնում է Վոյդէկը։

—Ինչպէս չվախենամ, պատասխանում է մեր հերոսը ատամները միմեանց խփելով։

Բայց նոքա երկուսն էլ՝ Բարդէկն ու Վոյդէկը կանգնած են և մտքներով էլ չի անցնում, որ կարելի է փախչել այդտեղից։ Հրամայել են կանգնելու և վերջացաւ։ Բարդէկը սուտ է ասում։ Նա այնպէս չէ վախենում, ինչպէս կը վախենային հազարաւոր ուրիշները, եթէ դրա տեղը լինէին։ Զինուորական կարգապահութիւնը իշխում է նրա երևակայութեան վրայ, իսկ երևակայութիւնը նրա դիրքն այնպէս զարհուրելի չէ ներկայացնում, ինչպէս որ է։ Բարդէկն այնուամենայնիւ կարծում է որ նորան կըսպանեն և այդ միտքը հաղորդում է Վոյդէկին։ Երկինքը սև չի հագնիլ, եթէ մէկ յիմար սպանեն բարկացկոտ ձայնով պատասխանում է Վոյդէկը. այդ խօսքերը շատ հանգստացնում են Բարդէկին։ Կարծես թէ գլխաւորապէս նրան այն միտքն է զբաղեցնում թէ երկինքը սև կը հագնի թէ ոչ։ Այդ մասին վստահանալով նա աւելի համբերութեամբ է կանգնած, միայն զգում է թէ ինչպէս ինքը շոգում է և ինչպէս քրտինքը թափվում է իւր ճակատից։ Այդ միջոցին հրացանաձգութիւնն այնպէս սարսափելի է դառնում, որ զինուորների շարքերը հալվում են կարծես թէ։ Սպանուածներին և վիրաւորուածներին այլ ևս դուրս տանող չկայ. մեռնողների խռխռոցը խառնվում է հրանօթների սուլոցի և որոտի հետ. եռագոյն դրօշների շարժման նայելով այգեստաններում հետևակները հետզհետէ աւելի են մօտենում։ Հպարտ գնդերի ամպերը պատառոտում են գերմանական զինուորների շարքերը, և յուսահատութիւնն սկսում է տիրել նրանց. բայց այդ յուսահատութեան մէջ լսվում է անհամբերութեան և կատաղութեան տրտունջ։ Եթէ նրանց հրամայէին առաջ գնալ, նոքա կը յարձակուէին փոթորկի կատաղութիւնով։ Նոյն տեղը մնալ դոքա չեն կարող. մի զինուոր հանում է գլխից գլխարկը, խփում է գետնին և գոռում է.

—Մարդս մի անգամ պիտի մեռանի, երկու մահ չկայ։

Այդ խօսքերը լսելով Բարդէկը այնպիսի թեթևութիւն է զգում, որ գրեթէ այլևս չէ վախենում։ Եթէ յիրաւի երկու անգամ մեռնիլ չկայ, ուրեմն էլ հոգս անելու բան չկայ։ Ինչպէս այդ գռեհիկ փիլիսոփայութիւնն է, բայց նա աւելի լաւ է, քան որևէ այլ փիլիսոփայութիւն, մանաւանդ որ մարդուս սիրտ է տալիս։ Բարդէկն առանց դրան էլ գիտէր, որ մարդս երկու անգամ չէ մեռնելու, բայց նրան հաճելի էր նոյն խօսքը լսել մի ուրիշի բերանից, մանաւանդ որ այդ ժամանակ կռուի տեղը փոխարկուել էր մի տեսակ սպանդանոցի։ Ահա գունդը, որ մի անգամ էլ հրացան չէ արձակել, իսկ արդէն կիսով չափ ոչնչացրած է։ Միւս ջարդուած գնդերից մնացորդ զինուորների խմբերը խառն ի խուռն փախչում են նրա կողքով. միայն Պադգնեօզովայի Վերին և Ներքին Կրիվդի և Միգերովայի գիւղացիքը կաշկանդուած պրուսական զինուորական կարգապահութիւնով դեռ ևս անսասան են մնացել։ Բայց նրանց շարքերումն էլ նկատվում է արդէն տատանումն. մի վայրկեան ևս, և զինուորական կարգապահութեան կապերը կը լուծուին։ Նրանց ոտների տակի հողն արդէն կակղել է արիւնից, որի հոտը խառնվում է վառօդի ծխի հետ։ Շարքերից մի քանիսը չեն կարողանում այլևս միանալ,—դիակները խանգարում են։ Կանգուն մնացած մարդկանց ոտների տակը թաւալվում են ուրիշները արեան մէջ դգլարուելով ցաւերից, կամ արդէն իսկ փայտացել են մահուան գրկում։

Շնչելու օդ չկայ. շարքերում լսվում են տրտունջներ.

—Մորթոտելու են բերել մեզ այստեղ։

—Ոչ ոք կենդանի չի մնալ։

—Լռի՛ր, լեհացի անասուն, լսվում է սպայի ձայնը։

—Քեզ համար լաւ է իմ մէջքի յետևը։

—Կանգնիր տեղդ։

Յանկարծ մի ձայն սկսում է։

—Քեզ պաշտպանելու համար...

Բարդէկն իսկոյն յարակցում է.

—Մենք առաջ կը վազենք, Տիրամայր...

Եւ Լեհական ձայների խումբը այդ կորստեան դաշտի վրայ դիմում և կանչում է Չենստոխովեան Տիրամօրը. «մեր աղերսները մի մերժիր»։ Իսկ նրանց ոտների տակ հնչում են հառաչներ. «ո՜վ Մարիա, Մարիա»։ Եւ Աստուածամայրը յայտնի կերպով լսեց նրանց, որովհետև այդ վայրկեանին փրփրած ձիու վրայ արշաւեց աջակից սպան, լսուեց հրամանը. «Յարձակուեցէ՛ք, ուռա՛, առա՛ջ»։ Սուինները խոնարհվում են. շարքերը երկար գծեր են կազմում և յարձակվում են բլուրների վրայ փնտրելու թըշնամուն, որ մինչև այժմ անտեսանելի էր մնացել։ Բայց մեր գիւղացիներին մինչև բլրի ստորոտը մնում էր դեռ ևս 200 քայլ տարածութիւն անցնելու, իսկ այդ տարածութիւնը նրանք պիտի անցնէին սպանիչ գնդակների տակ...

Կը կորչէ՞ն արդեօք նրանք ամենքը։ Կը փախչէ՞ն արդեօք... Կորչել կարող են նրանք ամենքը, բայց փախչել—երբէք, որովհետև պրուսական հրամանատարները գիտեն թէ ինչ եղանակ պիտի նուագել տան նրանց յարձակման ժամանակ, Թընդանօթների որոտման և հրացանների ճայթիւնի մէջ, ծխի և հառաչների մէջ. բոլոր փողերից բարձրաձայն դէպի երկինքն են թռչում լեհական օրհներգի հնչիւնները, որից իւրաքանչիւր լեհացու սիրտը թրթռում է կրծքում։ «Ուռա՛»—պատասխանում են լեհացիք։ «Pöki my zyjemy»։ Նրանք ոգևորվում են, արիւնը խփում է երեսներին։ Նրանք գնում են փոթորկի պէս, մարդկանց և ձիերի դիակների վրայով հրանօթների փշրանքների վրայից, նրանք կորչում են, բայց գնում են աղաղակով և երգով։ Ահա հասան նրանք այգեստաններին, ծածկուեցան թփերի մէջ։ Միայն երգն է հնչում և երբեմն փայլատակում սուինը. իսկ ներքևում փողերը հնչում են և հնչում... Ֆրանսիացիների հրացանաձգութիւնն արագանում է հետզհետէ, տենդային են դառնում և յանկարծ... յանկարծ լռում են նրանք։

Ն. Ք.

(Կը շարունակուի)

թեամբ, խառնվում են իրարու հետ։

Կարծեմ այդ ագռաւները երեւելիներից պիտի լինին։—Ահա դոքա ողջոյններ են տալիս միմեանց, ցոյցերով են հանդիսանում իրարու առաջ և՝ մէկը միւսի կողմն անցնելով, իրանց սրածայր ճիրանների հետքը թողնում են, արիւնով կարմրած ձիւնի վրայ։ Այսպիսի խաղ ու ոստոստումներ լաւ կատարելուց յետոյ՝ սկսում են դոքա կանչել շատ ցածր կրկչումով, և աչքերը չհեռացնելով վիրաւորեալ զինուորից՝ ակնդէտ նայում են նորան։

—«Մօրքեռորդի, ասում , այդ սև թռչուններից մէկը։ Ես քեզ հրաւիրեցի այստեղ Ֆրանսիացի այն փոքրիկ զինուորի համար, որ ահա քո առջևն է պառկած։ Նա փոքրիկ, բայց խրոխտ մի զինուոր էր, և թէպէտ մի առանձին քաջասրտութեամբ էր ներշնչուած, սակայն ոչ խոհեմութիւն ունէր և ոչ մտածութիւն։ Ահա նայիր նրա ծակծկուած վերնազգեստին և երևակայիր, թէ որքան գնդակի հարուածներ են պէտք եղել, որ գետնին տապալեն նորան։ Նա մի շատ լաւ որս է մեզ համար, և եթէ կամենում էք, մենք մեր մէջ կը բաժանենք նորան։ Սակայն, մօրքեռորդի, պէտք է մի փոքր սպասենք և դեռ չմօտենանք, որովհետև նրա զէնքերը թէև փշրուած են երևում և ինքն էլ՝ այնպէս գլխաբաց ու ձեռքերը անշարժ, գետնին է ընկած, այնուամենայնիւ նա դարձեալ երկիւղալի կարող է լինել, եթէ վեր կենայ...»

Այս խօսողը ամենից խոշորն է, և երկու միւս ագռաւները՝ թէև ունկնդիր լսում են սրան, բայց դարձեալ սրա կոր ու կատաղի կտուցից իրանց հեռու են պահում։—«Կեցցէ, աղաղակեց շարունակելով սա, կեցցէ, մենք նրան կը բաժանենք մեր մէջ։ Եւ ես... ես կ'ուտեմ նրա արի և եռանդոտ սիրտը, որ առոյգացնէ իմս...»։

Փոքրիկ զինուոր, լսո՞ւմ ես արդեօք, թէ ինչ են ասում։ Սիրտդ իրաւ այլ ևս չէ՞ բաբախում։

Հիմա միւս ագռաւն է խօսում։—«Ես... ես կը հանեմ—կ'ուտեմ, ասում է, նրա աչքերը։ Ֆրանսիական աչքերը որ կան՝ լայն, պայծառ և կենսափայլ աչքեր են»։

Դէհ շուտ, բաց արա աչքերդ, փոքրիկ զինուոր, բաց արա շուտով, եթէ աչքիդ լոյսը դեռ չես կորցրել...

Այժմ արդէն երրորդ ագռաւն է կանչում։—«Իսկ ես... ես կ'ուտեմ, ասում է, նրա լեզուն։ Լատինական երկրներում դարձեալ այդ լեզուն է, որ ամենից ընտիր կտորն է...»։

Փոքրիկ զինուոր, խօսիր է՛, մի ուժեղ ճչա, ասա դրանց է, որ թէև արիւնաքամ ես եղած, բայց երակներիդ մէջ տակաւին խաղում, հօսում է այդ կենսատու հիւթը...

Արդարև կարծես թէ մեռած լինի նա, որովհետև երբ այդ խորհրդակցութիւնը վերջացաւ և երեք սև ագռաւները սրատես աչքերը յառած, գիշատիչ կտուցները սրած, թևերը թափ տալով նրանց մօտեցան՝ նա չերերաց անգամ։

Խե՜ղճ Ֆրանսիացի փոքրիկ զինուոր, դոքա քեզ շուտով մաս մաս կ'անեն բոլորովին և ապա կատաղաբար կը յարին քո մարմնին։ Նշանազգեստիդ կոճակներն անգամ կը փախցնեն դոքա, որովհետև աւարառութեան այդ թռչունները ամեն փայլուն բան՝ թէկուզ արիւնի միջից էլ լինի, վերցնում, տանում են...

Ահա կամաց-կամաց երեք ագռաւը աւելի մօտենում են վիրաւորեալին և ամենից լիրբը յանդգնում է կտցահարել նորա մատը։

Այս անգամ արդէն զարթնում է փոքրիկ զինուորը և սկսում է դողալ բոլորովին։

—«Մեռած չէ եղել... ոչ, նա մեռած չէ եղել. . .», ասում են միմեանց այս վախկոտ կենդանիները և թռչկոտալով վերադառնում են իսկոյն դէպի իրանց բլրակը։

Ո՛չ, Ֆրանսիացի փոքրիկ զինուորը չէ մեռած։ Ահա տեսէք, թէ նա ինչպէս վեր է քաշում իր գլուխը, և նոյն րոպէին ինչպէս նորան սիրտ և կեանք է տալիս դէպի այդ թռչուններն զգացած արհամարհանքը։ Ահա բացվում, կենդանանում են նորա աչքերը, լցվում, փչվում են շնչով նորա ռունգերը և նա զգում է, թէ օդն էլ այնպէս ծանր չլինելով՝ աւելի ազատ է շնչում ինքը։

Ձմերային վարդագոյն արևի վերջին ճառագայթները դեղնելով, կամաց-կամաց սկսում են չքանալ այդ աւերած երկրից։ Այսպիսի տխրատես արևմտի միջոցին, որ նորան արշալոյսի նշոյլ է թվում՝ գետնին պարզած իր ձեռքի տաքութեամբ, կարողանում է նա արդէն հալել ձիւնը։ Եւ ահա այդ ձիւնի տակ շօշափուելով՝ սկսում են երևան գալ նոր արմատ բռնած կանաչ հասկերի փոքրիկ ծիլերը. . .

Ո՜հ, սքանչելի կենդանութիւն։ Վիրաւորուածն զգում է ասես, թէ ինքը նոր է ծնվում։ Յենուելով իր երկու ձեռքով հայրենիքի հողի վրայ՝ նա ուզում է վեր կենալ։ Երեք ագռաւը հեռուից ակնդէտ նայում են նորան և պատրաստ են թռչելու։ Եւ հէնց որ տեսնում են, թէ Ֆրանսիացի փոքրիկ զինուորը ոտքի կանգնած դողդողալով իր լքեալ զէնքերն է փնտրում իր շուրջը, իսկոյն երեքն էլ միասին բարձրանում, սլանում են հիւսիսային կողմը, որ արդէն պատած է մութով ու խաւարով։

Ահա լսվում է վերևից նոցա թևերի սոսկալի բախիւնն ու կտուցների կրճիւնը։ Այս շտապ ու աղմկալից սլացման միջոցին երկիւղն ու բարկութիւնն են, որ տիրել են նոցա։ —Կարծես անյաջող աւարառութիւնից փախչող աւազակներ լինին, որոնք վազ տալով կռվում, ծեծվում են միմեանց հետ. . .

Թարգմ. ֆրանս. բնագրից

Յ—բ—յ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԻԱՄ.—Figaro'ն մի քանի հետաքրքրական պատմական տեղեկութիւններ է հաղորդում Սիամի յարաբերութիւնների մասին դէպի Ֆրանսիան։ Այս տեղեկութիւններից երևում է, որ սիամցիները տակաւին Լիւդովիկոս XVI-ի օրով աշխատում էին յարաբերութիւններ սկսել Ֆրանսիայի հետ, ուղարկելով Փարիզ մի մեծ դեսպանական պատգամաւորութիւն։ Այսպիսի մի մեծ դեսպանութիւն Սիամն ուղարկեց նաև Նապօլէօն III-ի օրով Փարիզ։ Սիամի այժմեան թագաւորի հայրը Ֆրանսիայի մեծ երկրպագու էր։ Համեմատաբար նա մի լուսաւորուած մարդ էր. գրում էր ի հարկէ ոչ առանց սխալների, մի փոքր Ֆրանսերէն, մի փոքր անգլերէն և մինչև անգամ փոքր ինչ էլ լատիներէն։ Ամբողջ ներկայ Սիամը սորա բարենորոգիչ գործունէութեան արդիւնքն է։ Նա աշխատում էր հետզհետէ քաղաքակրթական բարենորոգութիւններ մտցնել Սիամի վարք ու բարքի մէջ, երկիւղ կրելով որ իւր երկրին վիճակուած չլինի Ճապոնիայի բաղդը,—ուր քաղաքակրթութիւնը նոր արթնացած ժողովրդի աչքերը շլացնելով դառն պտուղներ առաջ բերեց։ Հանգուցեալ թագաւորը հաւասարապէս պաշտում էր թէ սպիտակ փղերին, որոնք սուրբ են համարուած Սիամում և թէ Աստուածածնայ պատկերը, որ ընծայել էին նորան կաթոլիկ միսիօնարները։ Իւր մահուան անկողնում նա խորհուրդ տուեց իւր որդուն ի բոլոր սրտէ սիրել Ֆրանսիան, բայց միևնոյն ժամանակ, որքան կարելի է, հեռու պահել իրան նորանից։

ԻՏԱԼԻԱ. -- Հռոմից գրում են «Temps» լրագրին, որ պապը մտադիր է մի շրջանաձև գրել յոբելեանի մասին, ուր կը խօսէ պապականութեան և նորա վերաբերութեան մասին դէպի ժամանակակից խնդիրները։ Վատիկանում պատմում են, որ երբև թէ Թիւրքիան նորերումս փորձ է փորձել գաղտնի բանագնացութիւններ սկսել կոնկորդատ սահմանելու մասին, որով պէտք է կանոնաւորուէին Օսմանեան կայսրութեան քրիստոնեաների վերաբերեալ խնդիրները։ Պապը սակայն մերժել է այս առաջարկութիւնը, չկամենալով թուլացնել Ֆրանսիայի ունեցած պրօտեկտօրատը Արևելքի քրիստոնեաների վրայ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Յուլիսի 20-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. —Նոր օրէնք է հրատարակուած Անդրկովկասեան երկրում մաքսային բաժին հաստատելու։

Պետերբուրգի համար քաղաքագլուխ ընտրելն անաջող անցնելու պատճառով կառավարութեան կողմից քաղաքագլուխ է նշանակուած խորհրդի անդամ Ռայլկօ-Ռօժնովը։

ԲԵՐԼԻՆ. — «Beichstgeretz Blatt»-ը այսօր հրատարակել է յուլիսի 17/29 կայացրած մի որոշում, որով Ռուսիայից ներմուծուող ապրանքները Գերմանիա մուծելու 50% բարձրացրած մաքսագնի են ենթարկուած։

Յուլիսի 21-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Մտադրութիւն կայ՝ հացահատիկների գները պահպանելու համար, այս տարի աւելի մեծ չափով փոխադրութիւններ տալ գրաւականով և փոխադրութեան եղանակը դիւրացնել։

ՓԱՐԻԶ. — Լրագրները հաստատում են որ Դևելլի և լօրդ Դիւֆերէնի բանագնացութեանց հետևանքն այն է եղել որ համաձայնութիւն է կայացած՝ Ֆրանսիայի նոր տիրապետած երկրի և Գերմանիայի ու Չինաստանի սահմանների միջև չէզոք տարածութիւն հաստատուի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱՆ

(Յուլիսի 20-ին)

	Ռ.	Կ.
Լոնդօն 10 ֆունտն արժէ . .	96	70
Բերլին 100 մարկը — . . .	47	$32^1/_2$
Փարիզ 100 ֆրանկը — . . .	37	30
Ոսկին — — — արժէ . .	7	77
Մաքսային կուպոններ — . .	155	—
Արծաթ — — — . .	—	—
Բորսային դեղջ — —	$4^1/_2$ —$5^1/_2$ %	
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի	103	25
— — — 2-րդ —	— 103	25
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
— — — 5-րդ —	— »	— »
— — — 6-րդ —	—	—
6% ոսկեայ րէնտա	156	75
4% ոսկեայ փոխառութիւն . .	—	—
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ.	—	—
— — — 2-րդ —	101	50
— — — 3-րդ —	102	25
Ներքին 5% առաջին փոխառ.	242	25
— — երկրորդ —	225	75
Պետական. երկաթուղային րէնտա	103	50
$5^1/_2$ րէնտա	103	50
4% ներքին փոխառութեան.	95	50
5% գրաւ. թղթ. Ազն. կալ. բանկի.	100	62
Արք. Ազն. կալ. բանկի խաղարկութեան գրաւ. թղթ. . .	194	50
Պետերբուրգի քաղաքային վարկի ընկերութ. պարտատոմսեր	101	75
Մոսկուայի քաղ. վարկի պարտատոմսեր — —	101	25
Օդեսայի — —	101	—
Թիֆլիզի — —	98	75
Գրաւ. թղթ. Թիֆլ. կալ. բանկ.	100	25
— — Քութայիսի	100	25

Բօրսայի տրամադրութիւնը խաղաղ է։

ԶԱՆԱԶԱՆ

«Անասնաբուժական գիտութեանց Արխիվ» ամսագիրը հետաքրքիր տեղեկութիւններ է հաղորդում անասունների կատաղութեան վիճակագրութեան վերաբերութեամբ զանազան եւրոպական տէրութեանց մէջ։ 1891 թուականին Ֆրանսիայում պատահել է 1,947 դէպք շների և կատուների կատաղութեան, սպանուել են 5,425 կծոտած շներ. կծել են 669 մարդու, որոնցից մեռել են 19 հոգի։ Գերմանիայի արևելեան, հարաւային և արևմտեան մասերում պատահել է կատաղութիւն 445 դէպք, միւս մասերում միայն մի քանի դէպք, իսկ Բեռլինում և միւս մեծ քաղաքներում կենդանիների կատաղութեան և ո՛չ մի դէպք չէ պատահել։ Աւստրիայում կենդանիները կծել են 390 մարդ, որոնցից մեռել են 11 հոգի, իսկ կատաղի շների թիւը եղել է 830։ Հունգարիայում ցուցակագրուած է 718 դէպք շների կատաղութեան և 405 մարդ է կծոտուել, որոնք Բուդա-Պէշտի՝ Պաստեօրեան Բուժանոցումն են դարմանուել։ Անգլիայում կենդանիների կատաղութեան դէպքերը աննշան են. 1891 թուականին ցուցակագրած է միայն 79 դէպք։ Ռուսաստանում 1888 թուականին, պաշտօնական տեղեկութեանց նայելով, պատահել է 2,720 կատաղութեան դէպք։

Խմբագիր Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան՝ (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—$10^1/_2$ ժ. աչքի և ներքային ց.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—$11^1/_2$ ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—$11^1/_4$—$12^1/_2$ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—$1^1/_2$ ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Վ. ՉԵՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն լսխի և մէզի։

Ա. Ա. ԳԱԴՕՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (նաև մորֆիա) և վիրաբուժութեան։

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—$7^1/_2$—8 ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—$7^1/_4$ ականջի, կոկորդի և քթի և ներքային ց. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Նաւասարդեան։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12 ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլովօ դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին. Միխայլովոյից Թիֆլիզ՝ առաւօտեան 8 ժ, 10 ր. ապրանքա մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 9 ժամին 20 ր., իսկ Գանձակից Թիֆլիզ է հասնում առաւօտեան 1 ժ. 30 րոպէին։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը)

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10 ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան։

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9 ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5 ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը $8^1/_2$ ժամին երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը $11^1/_2$-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստապօլի վրայով։

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին։

Բաթում է հասնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստապօլի վրայով։

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով։

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑԸ

Հրաւիրում է կրօնի (ուսմն ս. գրոց 6), հայերէնի (6), հայոց պատմութեան և հայաստանի աշխարհագրութեան (4), Ռուսաց լեզուի (26), Ռուսաց պատմութեան և աշխարհագրութեան (4), ընդհանուր պատմութեան և աշխարհագրութեան (13), բնական պատմութեան և բնախօսութեան (4), ֆիզիկայի (2), մաթեմաթիկայի և տիեզերագիտութեան (14), ֆրանսերէնի (7), և գ. նախակրթարանի (26) դասերի համար նոր ուսուցիչներ և մի վերակացու։ Դասերի գինն 25, 30, համալսարականներին 40 ռուբլի վերակացուին՝ 200։

Սինօդի կարգադրութեամբ բոլոր ծառայողների ռոճկից 3% զեղչվում է։

Ցանկացողները թող բարեհաճեն դիմել հոգաբարձութեան մինչև օգոստոսի մէկը, յայտնելով թէ ո՛ր դասերը կամենում են միացնել, ներկայացնելով իրանց ուսման և ծառայութեան վկայականները։

Քարտուղար հոգաբարձութեան

[illegible]

(97) (4—3)

Թիֆլիզի Աղէքսանդրեան ինստիտուտը աւարտած

ՄԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉ

որ չորս տարի շարունակ՝ աւարտելու օրից սկսած ուսուցչութիւն է անում պետական ուսումնարաններից մէկում, ցանկանում է Թիֆլիզի կամ գաւառական քաղաքների հայ եկեղեցական դպրոցներում ուսուցչութեան պաշտօն վարել պատշաճաւոր ռոճկով։

Հարցնել Թիֆլիզ, կենդրոնական գրավաճառանոց։

(խմբ.) (5—1)

«ԲՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ»

ՖՕՍԹԵՐԻ, ՆԿԱՐՆԵՐՈՎ,

Թարգմանութիւն

ԳՐԻԳՈՐԻՍ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

Գինը 50 կոպէկ. զեղջումն 20%։

Դիմել՝ Թարգմանչին կամ կենդրոնական գրավաճառանոցին։

(խ) (5—4)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

MESSAGERIES MARITIMES

(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՑԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթեւեկութիւն Լոնդոնի ու Բաթումի մէջև և փոխադարձաբար։

Ուրբաթ, յուլ. $^{28}/_9$ օգոստ. դուրս կը գնայ Բաթումից «Ալֆէէ» (Alphée) նաւը, նաւապետ Մ-ծե (Matei) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Լոնդոն, մտնելով նաև միջանկեալ նաւահանգիստները։

Ագէնտները՝ Բաթումում [illegible], Թիֆլիզում [illegible] և Բագւում [illegible]։

(2—2)

ԱՐԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Նովօրոժնայա փողոց, № 9)

Ցանկացողները, ունենալ իրանց առևտրական գործերի համար անցեալ յունիսի ամսում ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մամուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, և ունեն [illegible]։

Ընդունելութիւնները սկսվելու են սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրը և կանոնները կը ստանայ ձրի և [illegible] Թիֆլիսեան-ների բանկային գրասենեակում և կուրսերի հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմեն՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мамуэльянцу.

(100) (5—2)

Թիֆլիզի Կենդրոնական և Կովկասի

ՈՒՐԻՇ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՀԱՅ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է

ԱՏՐՊԵՏԵԱՆԻ

«Ալմաստ» վէպը Բարձր-Հայոց կեանքից . . . . . . 2 ռուբ.
«Խև-Կարապետ» վէպը Հայ-կաթոլիկների կեանքից . . . 1 »
«Ջուշան» ողբերգութիւն Թուրքահայերի կեանքից . . . 1 »
«Սարրաֆ» ողբերգութիւն Թուրքահայերի պատմ. կեանքից . . — 30 կ.

(62) (50—16)
ուր.

Ա. Գ. ՄԻՐԶՕԵՎԻ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ամառը յուլիսի 10-ից տեղափոխվում է Վլադիկաւկազի կայարանի մօտ գտնուող [illegible] ուսումնարանների բոլոր դասարանների համար. դիմել Грибоѣд. ул. д. № 11.

(79) (5—5)

Дозволено цензурою Тифлисъ, 22 Іюля 1893 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул. д. № 1—2